



ՏՆՕՐԷՆ-ԷՄՐԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

• ՏԱՐԻ ԹԻԻ 9

— ՀԱՐԱՐ —

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ԱՊԱՋԱԿԱՆ ՔԱՆԱԾՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՊԱՋԱԿԱՆ ՔԱՆԱԾՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՄՈՒՅԻԶ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաշտի-Պարու, Օռնդախ-Պար հաստ առու-Քենանի Էմ, Թիւ 16

(T. آصاوریان) شرکت صنیعہ مطبعہ — باب عالی جادہ سندھ نومبر ۲۰۰۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտի-Ալի հաստ Էմ 52

Հատոր 40 փարսա



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լագործութեամբ, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը դնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոյն մի միայն Սինկեր Ընկերութեան լաւատուանց մէջ:

ՇԱՐԲԱՆԿԱՆ
ՍԱՍՆԱՆՎԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկէր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻԻՏԱՐ | Զարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երախաւորութիւն

Մասնանիղեր գաւառներու քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին՝ կը գտնուի Զիւրա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզդուլուի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

Թերթ ազգային, գրական եւ քաղաքական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրշ. վեցամսեայ 45 դրշ. գաւառներու համար տարեկան 108 դրշ. վեցամսեայ 60 դրշ. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ քսար փարա: ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խրհաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԻԵԼՔ Վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագին պէտք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին էֆ. Պոյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 9

ՇԱՐԱՐ

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ԱՆՈՂՈՒԹ ԵՐԱՆԻ ՄԸ

ԱՄԷՆ ԱՆՈՆՑ ՈՐ...

Մարդկութիւնը՝ հսկայ լեռ մըն է, ու մարդիկ նոյն լեռին կատարն ու կողերը պըճնող երկներեան բոյսերն են իրենց նկարագրի այլազան դոյներով, և կամ զայն ծածկող սառոյցները՝ իրենց խառնուածքներուն պաղութեամբ:

Իսկ կծծիները՝ հետզհետէ հաւաքական դրամով որքան ալ իրենք իրենց բարձր դիրք մը չինած ըլլան, դարձեալ կը նմանին լեռի մը բարձունքէն փրթած այն պաղ ձիւնակոյտին՝ որ իրմէ բան մը վրայ չըտալէ զատ՝ ընդհակառակը իր վրայ կը հաւաքէ ամէն ինչ որ գտնէ իր ճամբուն վրայ, ու թէեւ դէպի վար կը գլորորի, սակայն կը խոչորնայ, կը թանձրանայ, կուրորէն կը խոյանայ դէպ առաջ, անընդհատ, թաւալգոր, մինչեւ այն առեւն՝ երբ ժամանակը գայ այլեւս կանգ առնելու կամ անդունդի մը խորը՝ — իր վեր-

ջին կայանը — ուր կը հալի, կը սմքի, և կամ լեռին ստորոտը գտնուող գիւղի մը վըրայ ինչպէս կը պատուհասէ զայն, կը փըշրուի, ու վրայ կուտայ ամէն ինչ, նոյն իսկ իր դոյնութիւնը:

Կծծի մարդիկ օգտակար չ'ըլլալէ զատ յաճախ մեասակար իսկ եղած են մարդկութեան: Ահաւասիկ խօսք մը որ թէեւ պայմանադրական՝ այլ սակայն դարեւու փորձ իմաստասիրութիւնը կը խառնէ իր մէջ:

Մարդիկ կան՝ որ դրամ ունին ուտել չ'են ուզեր, կան ալ որ՝ ուտել կուզեն բայց դրամ չունին:

Երկուքն ալ զրկուած կապրին, սա տարբերութեամբ որ՝ դրամ չունեցողը երբեմն կուտէ պատահաբար իր ձեռքը անցած դրամը, բայց դրամ ունեցողը՝ բնաւ չի կրնար ուտել:

Յաւիտենական դատապարտեալն է ան՝ որ Մամոնային ահարկու լուծին տակ կը հեծէ, ու տարօրինակ դատապարտեալ մը, որ զինքը խոշտանգողին հանդէպ գետնամած երկրպագութենէ զատ ուրիշ ոչինչ կը սիրէ ընել...

Դրամ ծախսելով ինչ հաճոյք որ կզգայ, ինչ վայելք որ կ'ունենայ մարդ, նոյնքան կամ աւելի կը տառապի, կը չարչարուի ագահ մը, ու իր դրամը չի ծախսելու միջոցներուն վրայ կը խորհի: Դրամը իր անգութ մղձաւանջն է, զահանդելի եղջերուաքաղը:

Վիճիկութիւնը chronique հիւանդութիւն մըն է, որուն ախտանշիւնը շատ ու շատ դիւրին է նշմարել մարդուս վրայ, նոյն իսկ պարզ մահկանացուի աչքով:

Գլխաւոր ախտանշիւն է միտքի սկաւորքիւնը՝ որմէ ետքը կուգան հետզհետէ աներեսութիւն, կեղծաւորութիւն և անխղճութիւն... իր սարքն: Կայ նաեւ իր վրայ՝ այս բոլորին խառնուրդը, որ կծծութիւն մեղմահունչ բառին թաւ արտասանուածն է. ԴՁՁՈՒԹԻՒՆ:

Նկարագիր՝ — մարդուս հոգիին կենդանի գոյնը — բնաւ մի փնտռէք այդ կարգի ախտավարակ մարդոց քով, կամ շատ աղտոտ կը գտնէք, և կամ բնաւ չէք գտնիր, ինչպէս որ հիւանդ մարդու մը գոյնը կամ բոլորովին նետած կ'ըլլայ և կամ շատ աղտոտ:

Կծծութեան վրայ ձգուած այս հակիրճ ակնարկէն վերջ՝ անցնինք ապրուած կեանքին, տեսնելու համար թէ՛ մեր հայեցողութիւնը որքան ճիշդ է՝ մարդկային այդ մոլութեան մասին: Չէ՞ մի որ օրինակները աւելի պերճախօս կ'ըլլան, ուստի ներուի ինձ հատ մը մէջ բերել հոս՝ թէ՛ն զգուանքով:

Ամէն տարուան պէս՝ այս տարի ալ թատերական ներկայացում տրուեցաւ ինպատկար Ս. զբոսաշրջական իւսկիւտարու:

Անցեալ տարի թաղին ունեւոր ու հանրածանօթ կծծիներէն մէկուն մէկուկէս ոսկինոց տոմսակ մը զրկուեր էր:

Մարդուկը վերադարձուցեր էր տոմսակը, ասոր տեղ երկու մէծիտիչնոց ուրիշ տոմսակ մը պահանջելով: Որովհետեւ ներկայացումին 7-8 ժամ մնացած էր բերել, չէին կրցեր զայն ուրիշ տեղ մը տեղաւորել, որով այդ տոմսակը մէջ էր խաղացեր:

Այս տարի իմամականութիւնը խոհեմութիւնը կունենայ 40 զրուչնոց տոմսակ մը զրկելու, այս անգամ դարձեալ վերջին օրը ետ կը բերէ զայն, և ութ տասը օրուան մէջ փորձ ըրած ձեւերը, իբերան սորված խօսքերը, իրենց բովանդակ ծիծաղելիութեամբ ու ճղճիմութեամբ կը թափէ անոնց առջեւ:

«Աղաներ՝ — կ'ըսէ ան — թաճիւս կ'ընեմ որ հիշ պանէ մը խապար չունիք եղեր, ինծի պէս մարդուն քառսուն զուրուչնոց պիլէթ կը զրկուի՞ մի, ինծի պէս մէկը կա՞յ իւսկիւտարի մէջ»:

Իրեն պէս մէկը... կծծի... իրա՛ւ չեկայ, կը խորհիմ հիմայ: Գէթ այդ կէտին մէջ կատարեալ իրաւունք ունէր ան:

Եւ այս խօսքերը ըսելով մէկգի կը նետէ ձեռքի տոմսակը ու կ'աւանդէ կը քալէ, վախճալով որ չ'ըլլայ թէ սիրտը առնելու փորձեր ընելով աւելի խոշոր տոմսակ մը թխեն ձեռքը և կամ ամէցնելով գոնէ դրամական նուէր մը փրցնեն իրմէ, իբր ստեւ մը՝ խոճկորի հօր թիկունքէն:

Իր հապշտապ քալուածքին, ու իր դուռնիկի շարժուածեւորուն մէջ՝ իր կեղծ բարկութիւնը և իր փախչելու միտումը այնքան յստակ կ'երեւային որ, հոն գտնուողներուն ամէնքն ալ սառած՝ սահմուկած մնացած էին, որպէս թէ՛ իբր ցուրտ սառնակոյտ մը, գըլտորած անցած ըլլար իրենց քովէն այդ մարդը՝ որ ամբողջ հաւաքածները իր վրայ պահելով ոչ ինքզինքին օգտակար պիտի կրնայ ըլլալ և ոչ ալ իր շուրջիներուն, և օրին մէկն ալ գերեզմանին փոսը գլտորելով՝ վերեւ յիշուած և անդունդը խորասուզուող սառնակոյտին պէս պիտի հալի, պիտի լընալինայ, պիտի սմբի, ու պիտի փճանայ:

* * *

Բեհեզգեբուդի մատնանին մէջ կը կարգանք երանիներու շարք մը, որոնցմէ մին մէջ բերելու փորձութեան չեմ կրնար զի մաղբել:

«Երանի՛ ագահներուն ու ժլատներուն, որովհետեւ անոնցն է իմ սանդարմետս...»:

ՍԱՐԳԻՍ Ս. ՍԱԲՍԵԱՆ

ԱՐՁԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵԿ ԱՐԱՐ

ԱՆՁԻՆՔ

ԷԼԷՆ — Երևասարդ ալի մը, կալուածներ ունի:

ԼԱՔԼԱՆՇ — Հանգստեան կոչուած սպայ մը, կալուածատէր, 40—50 ֆաթեկան:

ԼՈՒՔԱ — Տիկ. Էլէնի ծառան, 60 ֆաթեկան:

Տեսարանը կանցնի Տիկ. Էլէնի հիւրարարին մէջ:

Ա. ՊԱՏԱԿԵՐ

Տիկ. Էլէն խոր սուգի մէջ քաղուած, ձեռք բռնած մէկ լուսանկարը հիացմամբ կը դիտէ, եւ լուրս:

ԼՈՒՔԱ. — Մեղք էք Տիկին, ի՞նչ ըլլայ նէ ձեզի պիտի ըլլայ. աշխարհք արարած դուրս ինկած է, կատուն անգամ պարտէզը ճնճղուկներուն ետեւէն կը վազէ, գուք ինչո՞ւ հոս փակուիք մնա՛ք, տարիէն աւելի կընէ որ դուրս ելած չէք:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Չպիտի ելլամ, ինչո՞ւ ելլամ քանի որ իմ սիրելի ամուսինս մեռած է...

ԼՈՒՔԱ. — Աստուած ողորմի հոգուն, լուսերուն մէջ պառկի, բայց հերի՛ք լացիք վրան, ե՛ս ալ կնիկս կորսնցուցի, ե՛ս ալ լացի պռացի, ամիս մը, բայց չէր արժեք որ բոլոր կեանքս լալով անցնեմ, մարդու չէք երթար, մա՛րդ չէք ընդունիր, տո՛ր ծայրը ո՛ւր պիտի երթայ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Կը խնդրեմ որ ատա՛նկ քաներ չըսես, որչա՛փ ալ ինծի նեղութիւն պատճառած ըլլայ, անհաւատարիմ գտնուած ըլլայ ամուսինս, դարձեալ զինքը կը սիրեմ եւ կեանքիս մինչեւ վերջը իր սուգը պիտի պահեմ:

ԼՈՒՔԱ. — Գոնէ Թօպին, ձեր ամուսնոյն սիրական ձին, կառքին լծենք, ու սա՛նկ պարտէզին մէջ պտոյտ մը ըրէք:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Ա՛խ Թօպի՛, Թօպի՛ (կուլայ):

ԼՈՒՔԱ. — Մի՛ լաք, հանդարտեցէ՛ք Տիկին:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Որչա՛փ ալ Թօպին կը սիրէր, որչա՛փ աղէկ կառք կը վարէր, լու-

քա՛, այսօր Թօպին երկու դրիւ դարի աւելի տուր:

ԼՈՒՔԱ. — Շատ աղէկ, Տիկին. (դուրս կ'ելլայ):

Բ. ՊԱՏԱԿԵՐ

ԼՈՒՔԱ. — (Ներսմանալով) Տիկին, մէկը եկեր անպատճառ ձեզ տեսնալ կուզէ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Չըսի՞ր որ ամուսինս մեռնելէն վերջ մարդ չեմ կրնար ընդունիլ:

ԼՈՒՔԱ. — Ըսի, բայց մտիկ չըրաւ: Ահա՛ արդէն ներս կը մտնէ կոր:

ԼԱՔԼԱՆՇ. — (Ներս մտնելով խօսք Լուֆային կուղղէ) ... Աւանա՛կ, պարապ խօսք չեմ ուզեր, իշու կտոր. (Տիկինը նշմարելով) Տիկին ինքզինքս ներկայացնեմ. Պ. Լաբանչ, կալուածատէր, կարեւոր խնդրոյ մը վրայ տեսնուելու եկած եմ ձեզ հետ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Ձեզ մտիկ կընեմ...

ԼԱՔԼԱՆՇ. — Ձեր հանգուցեալ ամուսինը, ինչ 2500 ֆրանք պարտք ունի, ահա՛ մուրհակները, եւ որովհետեւ վաղը պանքա՝ ինչ գրաւի դրած կալուածներուս տոկոսը տալու պարտաւոր եմ, կը խնդրեմ որ պարտքերնիդ այսօր իսկ վճարէք:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Ամուսինս ի՞նչ առթիւ այդ 2500 ֆրանք գումարի պարտքը ըրած է ձեզ:

ԼԱՔԼԱՆՇ. — Գարի առած է:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Հառաչելով) Լուքա՛, մի մոռնար Թօպին գարին կրկին տալու: Գանի որ ամուսինս պարտք մը ունի, հարկաւ վճարելու պարտաւոր եմ, միայն թէ մատակարարս 1-2 օրէն պիտի գայ, ա՛յն ատեն կը կարգադրեմ: Բայց այսօր ճիշդ եօթը ամիս կընէ որ ամուսինս մեռած է, ստա՛կի վրայ խօսելու ո՛չ սիրտ եւ ո՛չ ալ հոգեկան տրամադրութիւն ունիմ:

ԼԱՔԼԱՆՇ. — Ես ալ անա՛նկ հոգեկան տրամադրութեան մը մէջ եմ որ եթէ պարտքիս տոկոսները չվճարեմ գործս լմնացած է:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Վաղը չէ միւս օր կըստանաք ձեր դրամը:

ԼԱՔԼԱՆՇ. — Այսօր փարա կուզեմ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Կը ցաւիմ որ անկարելի է:

ԼԱՔԼԱՆՇ. — Ըսել է չը՛ պիտի տաք:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Չեմ կրնար:

ԼԱՔԼԱՆՇ. — Մէրսի՛, ինտո՛ր պաղա-

րիւնութիւնս չկարսնցնեմ, չար բազդը կը
 հալածէ կոր զիս, ո՛ւր կերթամ «բարս չկայ»
 չան պէս կը յոգնիմ, Եօթնասուն քիւմէթր
 տեղ կը կտրեմ, կուգամ և ստակիր տեղ ի՞նչ
 գտնամ ազէկ ... «Հոգեկան տրամադրու-
 թիւններ»։ Ինտո՞ր չըբբլլի դուրս չելամ,
 ժամ մըն է պարապ խօսքերով գլուխս կու-
 տկնէք կոր։

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Աստ'նիկ գոհիկիկ խոսքեր
մտիկի ընկղու ընաւ զարթուած չեմ: ('Խուրս
կեկի):

Q. QUINCEP

ԼԱՔԼԱՆՇ. — (Արսենյան). Ի՞նչ կ'ըսեք
սա Տիկինին . . . «Հոգեկան արամադրու-
թիւններուն», ճիշդ եսթը ամիս կ'ընէ հզեր
իր ամուսնոյն մեռնելը, ինչո՞ւս պէտք,
պարտքիս տակօր վճարելու եմ թէ ո'չ, ձե-
զի կը հարցնեմ, կր'ամ մի այդ գումարը
վճարել, ազէ՛կ, ամուսինը մեռեր է, «Հո-
գեկան արամադրութիւններ» ունի եղեր,
մատակարարը չեմ գիտեր ո՛ւր անհետացեր է,
կրողը տանի զինքը . . . Բայց ե՛ս ի՞նչ ընեմ,
թողի՛մ, փախչի՛մ պարտապահանջներու ձեռ-
քէն, և ի՞նչպէս . . . Թերեւս պալօնով ի՛նչ,
պարտատէրներէս մէկուն կերթամ, տունը
չէ, միւսը կը պահուըտի, երրորդը գօլէրատ
բռնուեր է, սա տիկինն ալ «Հոգեկան ար-
ամադրութիւն» չունի, ո՛չ մէկը կուզէ պարտ-
քը վճարել, ինչո՞ւ, վասն զի շատ երես
տուի իրենց, Թոյլ գտնուեցայ, անուշու-
թեամբ վարուեցայ, բայց ևս ձեզի պիտի
սովորեցնեմ իմ ո՞վ ըլլալս, չպիտի ներեմ որ
քթիս խնդաք, հո՛ս պիտի մնամ, և . . .
տեղէս չպիտի չարժիմ մինչև որ բարաներս
չցնծաք: Կատաղութենէս ինքզինքս պիտի
ուտեմ, բարկութենէս ոտքերս կը գողան կոր,
չունչս կը կտրի կոր, Աստուած իմ, շատ գէշ
եմ, կրակներուն մէջն եմ: (Որ պօռայ) մէկը
չկա՞յ:

F. MUSEE

(Լուսա Եկրս Կուգայ գաւաթ մը ջուրով):

ԼՈՒՔԱՆ. — Տիկինը հիւանդ է. մարդ
չենդուներ:

ԼԱՅԼԱՆՇ. — Կորսու է՛ սրկէ : (Լուսա
ղուս կելլայ) : « Տիկինը տկար է՝ և մարդ
չընդունիր եղբ՛ր... » մարդ մի ընդունի՛ք,

սիրելի Տիկի՛ն, բայց գործերնիս կը կարգադ-
րենք, հոս այս թիկնաթոռին մէջ գամուած
պիտի մնամ մինչեւ որ դրամս չըստանամ*
Շաբաթ մը եթէ հիւանդ ըլլաք, ութը օր
հոս եմ, տարի մը հիւանդ ըլլաք, 12 ամիս
հոս պիտի մնամ: Զօրաւորը ե՛ս պիտի բըր-
թիմ, սիրելի Տիկի՛ն ... սուգի հագուտէն
և այսի փոսիկներէն կակուղցող մարդ չեմ
եւ, ատանկ այտի փոսիկներ չա՛ս տեսր եմ,
(պատահանէն կը պօռայ) Սիմօ՛ն ձերը քա-
կէ, շուտով չպիտի մեկնինք, ասոռ գնա՛
ըսէ որ ձիւն գարի տան: Որա՛փ ալ տաք
է ... ո՛չ ոք պարտքը կը վճարէ կոր ...
գիշերը մինչեւ առտու չեմ քնացեր և գիտ
հանդարտեցնելու համար սուգի վուալներ, և
«Հոգեկան տրամադւորութիւններ» կուստն,
Գլուխս ալ կրակներու մէջն է, արդեօք գա-
ւաթ մը գօնեա՞ք առնեմ. այո՛, այո՛, աղէկ
կըլլայ: (Կը պօռայ) ո՛վ կայ հոգ:

ԼՈՒՔԱ. — (Ներս կը մտնէ) Բա՛ն մը կու-
ղէ՞ք:

ԼՈՒՔՍ. — (Գօնեազ կը բերէ) շատ չը
փախի...

ԼՍ.ԲԼՍ.ՆՇ. — (Խաղկութեամբ) Ի՞նչ հը-
բամմեցիր . . .

ՀԱՅԲԱ. — Ե՞ն ... ոչի՞նչ ...

ԼՍԲԼՍՆՇ. — Գիտենք թէ որո՞ւն հետ կը
խօսիրս կոր . . . էկէլ խօսք չեմ ուզեր :

ՀԱՌԻՔԱՆ. — (Մեկուսի) Աս ի՛նչ շունչա-
նորդի շանգաւակ բան է: (Դուրս կելլէ):

ԼԱՅԼԱՆՇ. — Կառավարութիւնէս կարծես
 ձեռքէս փորձանք մը պիտի ելլայ: Ինծի ա-
 նանկ կուգայ կոր որ բոլոր աշխարհ մէկ հար-
 ուածէն փռլիի պիտի կրնամ վերածել: Սիր-
 արս կտոր կտոր կըլլայ կոր: (Կը պօռայ)
 Զկա՞յ մէկը:

Ե. ՊԱՏՆԵՐ

ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Ներս կը մտնէ, գլուխը կախած): Պարոն, ներեցէք ինձ ըսել որ՝ մեկուսացած կիանքիս մէջ, բաւական առեւելքի վեր մարդու խաղաղ ծայրեր լսելու վարժութիւնս կորսնցուցած եմ, կանչւում եմ անոր հետ որ հոգիստ յարգէք:

ԼԱՅԼԱՆՇ. — Ձեր տմուսնոյն պարտքը առէք որպէսզի երթամ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Որոշակի ըսի թէ տըրամադելի զբաւ չունիմ. կազաչեմ որ մինչեւ վաղը միւս օր համբերէք:

ԼԱՅԼԱՆՇ. — Ես ալ պատիւը ունեցայ ոչ նուազ որոշակի ձեզ պատասխանելու թէ այս նոտակին այսօր պէտք ունիմ, ո՛չ թէ վաղը կամ միւս օր: Եթէ չէք կրնար հաշիւս կարգադրել (կը նստի) հոս պիտի գամուած մնամ թիկնաթոռիս մէջ մինչեւ որ վաղը, ..(կը բուրբոխ) ըսէ՛ք ինձ, վաղը պարտքիս տոկոսները պէտք է որ վճարեմ, այո՛ կամ ո՛չ, թերեւս կենթադրէք որ կատակ է քսածս:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Պարոն, խնդրեմ ձայնդ մի բարձրացնէք ախորին մէջը չէք...:

ԼԱՅԼԱՆՇ. — Ախորի խօսք ընող չկայ ձեզի: Ձեզի կը հարցնեմ կոր թէ վաղը պարտքիս տոկոսները վճարելու եմ, այո՛ կամ ո՛չ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Տիկնո՛ւ մը ներկայութեան պէտք եղած վայելուչ ընթացքը չէք ունենար կոր:

ԼԱՅԼԱՆՇ. — Ներեցէք տիկնոջնորուն հետ վարուելու եղանակը մարդու չեմ հարցնիր:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Ո՛չ, չէք գիտեր կըրթութիւն չունիք, անքաղաքավար կոպիտ մարդուն մէկն էք. չնորքով մարդիկ տիկնոջնորուն հետ այս կերպ չեն խօսիր:

ԼԱՅԼԱՆՇ. — Շիտակը հրաշալի էք. ինչ թոնով խօսելու եմ եղեր... (կեղծ քաղաքավարութեամբ) Տիկնո՛ւ ներեցէ՛ք, շատ ուրախ եմ որ Ձեր պարտքը չվճարելու պատիւը կընէք կոր ինձ, հազար ներողութիւն գծեղ անհանգիստ ընելուս համար, այսօր օգը այնքան գեղեցիկ էր... որչափ այս սուգը ձեզի վայելէ... (խոնարհութիւն կ'ընէ):

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Ըրածնիդ սրամտութիւն չէ, այլ կոպտութիւն:

ԼԱՅԼԱՆՇ. — (Կապկելով) «Ըրածնիդ սրամտութիւն չէ, այլ կոպտութիւն: Տիկնոջնորուն հետ խօսել չեմ դիտեր եղեր... գիտցէ՛ք Տիկնո՛ւ որ կեանքիս մէջ ձեր տեսած ճանդուկներէն աւելի կին տեսած եմ. հինգ անգամ մենամարտած եմ... կնկան համար. տառնեղու կին լքած եմ, ինը կին ալ զիս լքած են. այո՛, Տիկնո՛ւ, այս այսպէս է: Ես ալ ապուշութիւններ ըրի, տխմար խօսքեր արտասանեցի, շիջութիւն ծախեցի, խոնարհութիւններ ըրի, սիրեցի, տառապեցայ, լուսնի լուսով հառաչեցի, մաղերս ցըցուեցան, հալեցայ, ուժգնութեամբ սիրեցի, կատաղութեամբ սիրեցի, այնքան սիրեցի որ սէրը այլեւս ինձի համար գաղտնիք ըսուած բանը չունի: Սիրոյ ճամբուն հարստութեանս կէսը կորսնցուցի: Բայց հիմա ամէն բան լըմնցաւ, այդ ամենուն վերջակէտ դըրած եմ. ո՛չ սեւ աչքեր, ո՛չ յորդաբորը նայուածքներ, ո՛չ կեռաս շրթունքներ, ո՛չ լուսնի լոյս, ո՛չ այտի վրայ փոսիկներ, ո՛չ տերեւներու սօսափիւն, ո՛չ հառաչ, ո՛չ, ո՛չ, ասանցմէ ո՛չ մէկը զիս կրնայ յուզել, ու ես ասոնցմէ ոչ մէկուն մէթալիկ մը իսկ կուտամ: Ձեզի համար չեմ ըսեր. Տիկնո՛ւ, բայց բոլոր կիները առաջինէն մինչեւ վերջինը, ամէնքն ալ բամբասող, մուխուժնի, հիյեք սուռաք ընող, ստախօս, անապարծ, ստորաքարչ. անսիրտ հոգիներ են, ներեցէ՛ք, Տիկնո՛ւ, անկեղծութեանս, (նախկին զարնելով) ճանդուկ մը տասը շրջալգեստաւոր փիլիսոփաներէ աւելի խելացի է: Առէ՛ք կիներուն ամէնէն բանաստեղծականը, եթերայինը, ամէնէն քաղցրը, համեստը և դիտեցէ՛ք. համակ մեռա՛քս, կարծես դիցունի մըն է, կը յափշտակուիս...: Մէյ մը հոգին թափանցէ՛, կը տեսնաս որ կոկորդիլոս մըն է: (Արդ մը առնելով կսոր կսոր կ'ընէ:) Բայց ամէնէն սոսկալին, ամէնէն ահուկին կայ, ա՛ս կոկորդիլոսը ինքզինքը արարազործութեան գլուխ-գործոցը! կը դաւանի ինթզինքը: Սէրը իր առանձնաշնորհումն է, Աստուածնիդ սիրէք, եթէ կուզէք զիս ոտքերէս կախեցէ՛ք, բայց ճշմարիտը ըսէ՛ք թէ՛ կին մը կրնայ իր պղտիկ շունէն տարբեր... մէկը սի-

րել: Կինը սիրոյ մէջ, մինակ լա՛լ, հառա-
չե՛լ գիտէ . . . իսկ մարդը կը տառապի և
ինքզինքը կը զոհէ: Կին արարածը միակ հո-
վահար շարժել և մէյ մըն ալ . . . մեր քիթէն
բռնել գիտէ. Տիկի՛ն, կը ցաւիմ ըսելու որ
հրամանքնիդ կին ծնած ըլլալու դժբաղդու-
թիւնը ունիք, որով դուք ինձմէ աւելի ա-
ւելի աղէկ գիտնալու էք թէ՛ ի՛նչ կարժէ
կին էակը, անկեղծօրէն խոստովանեցէք թէ
կեանքերնուդ մէջ չէք հանդիպած կնոջ մը
որ ամուսինը խաբած չըլլայ, որ հաւատարիմ
հաստատամիտ ըլլայ: Չէ մի որ մէկ հաստի մը
իսկ չէք հանդիպած: Տունը մնացող և տը-
գեղ կիներն են որք հաւատարիմ կըլլան:
Շատ աւելի դիւրին է եղջերաւոր կատուի
մը կամ ճերմակ լորամարգիի մը հանդիպիլ
քան թէ կնոջ որ հաւատարիմ ըլլայ, որ
հաստատամիտ ըլլայ:

(Մնացեալը յաջորդ թիւով)

ԱՆՈՆԻՍ

ՍՈՒԳԸ ԵՒ ԲԱՄԲԱՍՈՂ ԲԵՐԱՆՆԵՐ

Չեմ գիտեր թէ ո՛ր ժամանակէն ծագում
առած է սա սուգը, բայց եթէ կայ ճշմար-
տութիւն մը զոր պէտք է խոստովանիլ այն,
է որ, ա՛լ անտանելի դարձած է այդ հինա-
ուուրց սովորութիւնը: Բնական է թէ ամէն
բանաւոր արարած քիչ թէ շատ ունի իր ծը-
նողքը կամ աղգականը: Բայց վա՛յ է եկեր
այն գլխուն որ չըջապատուած է բազման-
դամ . . . սերունդէ մը:

Հայրդ կը մեռնի՝ սուգ, եղբայրդ կը
մեռնի՝ սուգ, կէսբայրդ կը չուէ՛սուգ, կէ-
սուրդ կը գոցէ աչքերը՝ մէյ մ'ալ չը բանա-
լու համար՝ սուգ, սիրուհիդ կը բաժնուի . . .
ուրիշին գիրկը իյնալու համար՝ դարձեալ
սուգ, և վերջապէս յաւիտենական սուգ:

Այս բոլորը չի բաւեր, այլ պէտք է նաեւ
պարտադրին համեմատ ալ լալկան դէմք մը
չինել նոյն իսկ եթէ կլորիկ հարստութիւն
մը ժառանգած ըլլա՛յ, զոր ապահովաբար
ուրախացուցած կ'ըլլայ զքեզ: Բայց հաւա-
տողներ կան թէ, քսաներորդ դարուն՝

հանդերձեալը չուողները, իրենց ետեւ կը
ձգեն երկաւ խոռոզ մը . . . պարտքի:

Հետեւաբար քանի որ դերասան չենք
ինչպէս կրնանք ակամայ տխուր դէմքեր չի-
նել: Կարելի է առարկէք, քահանաները՝
անոնց ըսելիք չունիմ. քահանան հոմա-
նիչ է դերասանին, երկուքն ալ իրենց կոչ-
ման հաւատարիմ, ի սէր մամոնային կուլան
ալ, կը խնդան ալ . . . մեր վրայ:

Երբ դժբախտութիւնը ունենալ կորսնցնելու
մեր սիրելի ընտանեաց անդամներէն մէկը,
սուգը վայրկեանական կը գոցէ մեր բոլոր հո-
ճոյքի դռները՝ բայց չի մոռնար բանալու . . .
մեր քսակին բերանը որ կսկսի փայլիլ իր
պարապութեամբ: Այս մասին փոքրիկ օրի-
նակ մը, զոր անցեալները փողոցէն գտած
տետրակի մը մէջէն քաղեցի:

Զաւկիս Արամին յուզարկաւու-

րութեան ծախք. Դրշ. 1000

Կնոջս սուգի հագուստ, դըլ-

խարկ, ձեռնոց, և այլն. » 750

Աղգականիս նմանապէս. » 250

Տղաքներուս և ինձ մանր մունր » 150

Դրշ. 2150

Ահա շուրջ քսան ոսկիի ծախք մը, որուն
10 ոսկին սուգի պատճառաւ, ինչ որ քիչ
գրամ չէ համեատ ընտանեաց համար . . .

Աւելորդ պիտի չըլլար աւելցնել թէ՛ բո-
լոր ասոնց վրայ, քսակնուս հետ մէկտեղ կը
բացուին նաեւ . . . բամբասող բերանները. Այս
առթիւ ազնիւ ընթերցողներուս կուզեմ ներ-
կայացնել քանի մը կցկատուր խօսակցութիւն-
ներ:

— Քա Ֆուլիկ. Միւրիճան աղան չէ սա
կացողը.

— Հա՛ քա, ոն է, ինտոր ալ տեսար:

— Քա մեղայ, վայ պանա մեղքիս, քը-
սան տարեկան տէլիխանը է դարցեր, թը-
ռալ մը եղեր է. քի սո՛րաթը ետաւը ետաւը կը
վառի կոր

— Ատ ի՛նչ է քա, տղուն մեռնիլը սա՛ն
շաբաթ մը չեղաւ, քա բաթլամիչ կըլլար-
կոր, ֆարաղա էրկուրէք շաբաթ տա՛նա պէք-
լէյէր խըռֆածը:

Ուրիշ մը.

— Քա Նունիկ, սա Բիլիճէնց հարսը չէ՛,
ֆարդին էս պաղնիք կերթայ կոր:

— Հա՛ քա առ ի՞նչ սիւս է, ան չէ ամա, աղուն քառսունքը ելա՛ւ:

— Ազէկ ըսիր քուրուկ, կէցիր նայիմ: Խաչին շարթուն, նէմզուրիս ցաւերը պոնեց, էրթէսի օրը Բիլիճէնց տղան մեռեր է ըսին. թամամ իշտէ աք աչիքեար հիսապը օրթան է, տահա տասնընինգ օր չէ էլէր, զահէր կը հոտեր կոր բօստալը քիչ մընալ սապո ընէր:

— Ան չէ, էրկանը աչկը մտնալ կուզէ տէ անոր համար է առ անէլէն, Ֆառլին է՛ս: Ուրիշ մը:

— Քա Ուստի՛կ, սա առապայով էկողները նայէ, քա կնկանը ճիւղէները կը տեսնաս կոր հէմէն կիտես քի մարդուն շալակը. պիտի էլլայ քա մարիկ, արդըլս բիւսբիւթիւն ամօթնին կերեր են:

— Էյ ոչկ օլսուն քեզի չի ճանչցար քա, իշտէ սա վուր է, անցածները լախըրտըն էղաւ նէ ըսիր քի անոր մարը ինծի սիւտանայութիւն ըրաւ տէյի:

— Քա վո՛վ, Պաշէմէզէնց աղջիկը. քա նա սա նայէ տիրի տիրի էրկանը կըլիւր կուրաւ տէ տահա իրէք ամիս չանցած պաշխա մարդ մը ճալակոզտեր է բօստալը...

— Էյ չիտակը կէշ լաղապ թախընմիշ չեն եղեր:

— Մեխկես այ խըյախ սուգերը մտեր է կը նայիս. (Զի մոռնանք ըսելու թէ կառքին մէջի այրը՝ ամուսինը մեռած կնոջ եղբայրն էր, որոնք մեռելոցին առաւոտուն գերեզմանատուն կ'երթային:

Ուրիշ մը.

— Քա Ամպէ՛ր, Մըզմըզենց Արթինը նայէ, կնիկը առեր տէ գերեզման կ'երթան կոր ալլահալէմ:

Կիտես քի կէնճըցեր է քա բօստալը...

— Ֆառլին կացի՛ր, տիխաղլը նայէ.

— Քա չէ ինչ կայ քի.

— Քա չես տեսնար կոր օխըլը ամպարւլը կէմի է դարցեր կընիկը.

— Քա հա՛, վա՛յ Աստուծո՛ւ կտնաք հէմէն խըզըն շուներ, քա առջինէկին խողը մտնալը տահա չորս ամիսը չանցաց տեղը թամամցուցեր են:

— Է՛յ, քա թէվէքէլի կըսեն քի իշկիւզար էնք տէյի:

Եւ գեռ ասոնց նման շատեր, որոնք առիթը ունեցայ լսելու անձամբ:

ՄԻՕՋՕԹԻՍ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

ԴԵՌԱՏԻ ԿԵՈՋ ՄԸ ԿՈՂՄԷ ԻՐ ԱՄՈՒՍՆՈՅՆ

Սիրելի ընթերցողներ, եթէ կէտ առ կէտ հետեւիք յետագայ պատուէրներուն, յանուն Աստուծոյ կը վստահեցնենք ձեզ թէ՛ երջանիկ պիտի ըլլաք ձեր ամուսնական յարկին մէջ: Կուզէք փորձել:

— Բարեկամներուդ հետ նաւելու մի՛ գար առանց կանխապէս ինծի իմացնելու:

— Մի մոռնար՝ փափախ յայտնած միջոցիդ, որ ես միայն երկու ձեռք ունիմ եւ քե՛ միեւնոյն ասեմ չեմ կրնար բերել հողաքափներդ, սիկաւներդ եւ օդիդ:

— Ամ.ն ասեմ ինծի մի կրկներ որ՝ քու մայրդ ինե՛ աս աւելի աղէկ կ'ընէր ամէն բան:

— Երբ կ'ուզես քատրոն կամ շանքան երթալ, մի յանդգնութիւն ունենար պնդելու որ՝ ես կը խեղդեմամ կոր հոն երթալ զբօսնելու համար:

— Շաս ու՛ քի մընար տունէն դուրս, հանութիւն ունեցիր՝ երբեմն ինծի հետ մընալուն մէջ գտնելու հանոյդ:

— Մեկ սենեակէն միւսը մի պսքսիր երբ կօշկներդ ցեխոս են, գորգեր խնայէ:

— Իմ քերութիւնս ինծի իմացուր, բայց գորովալի ներողամտութիւն մը ունեցիր իմ սկար կողմերուս համար:

— Երբոր ծառայիմ դիտողութիւն մը ընեմ, փափկութիւն ունեցիր՝ խկոյն անոր լաւ եփած մեկ կերակուր չի գովելու:

— Հանուած ժամանակդ ջանայ որ ըզգեսներուդ կոնակները չի փրցնես: Բանկոնըդ հանած ասեներդ երկվայրկեան մը կը շահիս, բայց ես ծամ մը կը կորսնցնեմ զայն կարկեցելու համար:

— Եթէ քեզի համար շինած կարկեաններս կակուղ չ'ըղան՝ կացին մը ուզելու չափ հեռու մի տանիր ծալրը:

— Երբ առնին պարսկանութիւններուս գործադրմանը մէջ չի հասնիմ միեակս, գլուխ բռնելք մեկդի դիր եւ ինծի օգնէ:

— Ինծի հետ բաժնէ քու վիշտերդ եւ քու ուրախութիւններդ, եւ գաղտնիք մ'ունենար իմ սիրաբնոյք սիրտս համար:

Թարգմ.

ՎԷՄԷՆ

ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՀՈՍ ՍԱՆԿ ՖԱԼԱՆ ՖԻԼԱՆ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ ԶԵՐ ԾԱՆՈԹ ԼԻԼԱՆ

Ամէն անգամ որ շարժումն պօնօս վճարելու համար գրասեղանին գլուխը կանցնիմ, — երանի անոնց՝ որոնք պօնօ վճարելու համար քացային գլուխը կանցնին, մինչ իմ պօնօսներս՝ գրասեղանս կը վճարէ — աչքիս դէմն է նամակ մը՝ սիրուած գրագէտէ մը ինձ ուղղուած, որուն պատասխանելու համար երբ գրիչս ձեռք կ'առնեմ, յանկարծ նիւթ մը գրիչս տակ կ'իջնայ և չի թուլուր որպէս զի գոնացում տամ այդ նամակին և թէ զայն ստորագրողին:

Գրագէտ բարեկամս կարգ մը հարցումներ ուղղած է ինձ և կուզէ որ պատասխանեմ, անշուշտ ոչ ոսկեղարու հայերէնով, ոչ ալ ենովք Արմէնի երազած իտէալ աշխարհաբառով, այլ իմ ոճովս ... կը հասկնաք անշուշտ, ոճ մը՝ որուն թէեւ հիմա կարեւորութիւն չեն տար, սակայն քսան երեսուն տարիներ վերջը թերեւս անթիքայի կարգ անցնին, ովամաններով գովաբանելով և երկինքի եօթերորդ խաւերը բարձրացնելով, ինչպէս ըրին Յ. Յ. Պարոնեանին, մարդը անօթի մեղցուցիւն և վերջը ելան կռապաշտներու պէս՝ կուռքի տեղ դրին, երգիծաբանութեան չաստուածը կոչելով:

Ինչ և է, այդ ժամանակին գիտնալիք բանն է: Տեսէք թէ նամակին մէջ ի՞նչ կ'ըսէ բարեկամս:

Ազնիւ Լիլա,

Վստահ եմ զուարթ գրչիդ եւ զուարթաբան մեծութեանդ, այս անգամ փոխանակ յօդուածի մը՝ զոր խօսացած էիր, քեզ կը հարցնեմ կարգ մը հարցումներ, որոնց պատասխաններուն կապասեմ անհամբեր, քերիդ միջոցաւ:

Մաղքելով յաջողութիւն քեզի, սրամտութիւն մեզիդ եւ երեւակայութեանդ ալ բռնի, կը խնդրեմ որ ընդունիս անկեղծ համակրութեանս եւ սիրոյն հաւաստին:

Քոյդ

Յարգելի նամակագիր բարեկամս չէ ուղած որ ստորագրութիւնը յայտնեմ, ուստի ներողամիտ կը գտնուիք անշուշտ այդ մասին:

Եւ ահա կսկսիմ իր հարցումներուն պատասխանել, խելապտուկիս կարողութեանը չափ, կանխաւ ներողամտութիւննիդ խնդրելով՝ եթէ անոնց մէջ ստոնն ատեն հանդիպիք ապուզուոք բացատրութիւններու, որոնց համար պատասխանատու չեմ, ինչ որ փչէ՝ նոյնը կը գրեմ հոս:

— Ըսէ ինձ Լիլա, օրիորդ մը ո՞ր տարիքին յոյսը կը կտրէ ամուսնանալէ:

= Խաղամուկներու հանդիպած էք կանաչ սեղանին շուրջ, անոնք մեծ յոյսերով կանցնին կը նստին և թուղթերը ձեռք կ'առնեն, կը չահին, կը կորսնցնեն և վերջապէս երբ *dépouillé* ըլլան և տառնոց մը չի գտնուի քովերին, խաղին սիրոյն, ուրիշներէ փոխառութիւն կընեն որպէս զի շարունակին խաղը և չի քաշուին, միշտ վաստկելու յոյսով: Ահա մեր օրիորդներն ալ այդպէս են, որչափ տարիքին լենայ ու *décavé* ըլլան, ճար մը կը փնտռեն՝ որպէս զի ապրին, եթէ ձեռքերնուն գայ՝ ուրիշին տարիքէն գողնալ կուզեն, միշտ ամուսնոյ մը ակնկալու յոյսով: Ութսուննոց ամուրի պառաւի մը «աղուորես» ըսէ, և ահա աչքերը պղտիկցնելով լեզուն դուրս կը հանէ, շրթունքները կը թըրջէ, որպէս զի աղուոր երեւայ: Աղջկան մը ամուսնանալու յոյսը՝ իր դաժաղին մէջ իրեն հետ միասին հողը կը ծածկէ:

— Ո՞ր կիները աւելի կը սիրուին ընկերութեան մեջ:

= Երիտասարդներու համար ընդհանրապէս այն կիները՝ որոնք իրենց ամուսինները տունը ձգած մինակ կը գտնուին սալօնին մէջ: Հափահառներուն համար այն կիները՝ որոնք գիտեն լաւանց իրենց ամուսնոյն կռահել տա-

լու, ստնկ առանց խազա հանելու ժամանակ
անցնելու սխաբմը, իսկ տարեցները և ծե-
րերը՝ ընկերութեան մէջ կը սիրեն այն կինե-
րը՝ որոնց աչքերը շուտ կը գոցուին, քու-
ներնին կուգայ և տեղերնին ընելու պէս միշտ
կերերական «վախիթ է հայտէ ելլանք սը-
թըխ» ըսելով: Բայց ընդհանրապէս սալօնի
մէջ կը սիրուին այն կիները՝ որոնք չախբինախ-
ին, թեթեւ ու լեզուանի, որոնցմէ ամէն
տարիքի անհատներ համ կառնեն:

— Կին մը գրաւելու եմ բռաթիֆ միջոցը
որն ե:

== Թէեւ քիչ մը քիչ համարձակութիւն
չէ այս հարցումը բարեկամի մը ուղղել, սո-
կայն զկարողութիւն խնդիր ըլլալուն համար կը
պատասխանեն:

Կին մը գրաւելու էն բռաթիֆ միջոցը ա-
նոր դէմ անտարբեր գտնուիլն է, երկորդ
կալան ձեւանալը, և երրորդ՝ իրեն հասկը-
նելը թէ, ինքը գեղեցիկ է, անուշ է, և
վերջապէս՝ է՛ այն ամէն բաները որոնց ամ-
բողութիւնը հրեշտակ մը կրնայ ունենալ
միայն: Կին մը գրաւելու համար չաքաթ մը
անթիֆ միացողի պէս ելլալու վրան ինտ-
լէն անտանելի բան չիկայ: Կինները երեկոյ-
եան շուքի մը կը նմանին, դուն որչափ ա-
ռաջքէն երթաս՝ անոնք միշտ քեզի կը հե-
տեւին:

— Ի՞նչ է բարեկեցիկ օրիորդի մը իսկալը:

== Բարեկեցիկ ըսելով կը հասկնամ օրի-
որդ մը, որուն հայրը տրամադիր է մինչեւ
հազար ոսկի գրամօժիտ բեռցնել... փեսին:
Այդ կարգի օրիորդները կը փափաքին որպէս
զի իրենց ամուսինը ԱՂՈՒՈՐ ըլլայ, քիչ մը
ապուշ, կնոջը քաբախներուն աչք չի դորեց-
նելու չափ, գիշերները կանուխ անկողին
մտնող... առանձին սակայն, և թուալէթի
հոգի տուող: Տարիքը որչափ յառաջացած
ըլլայ՝ այնքան գործին կուգայ, բաւական է
որ քիթէն թըփ թըփ չի կաթէ:

— Ո՞ր տարիք աղջկան հետ պէտք է ա-
մուսնանալ:

== Այս հարցման պատասխանելու համար
փորձառութիւն պէտք է ունենայ մարդ, և
փորձառութիւնն ալ հինգ վեց անգամ ա-

մուսնացած մէկը կրնայ ունենալ, սակայն
սա իրաւացի է որ՝ աղջիկ մը մինչեւ տասն
և հինգ տարիքին մէջ ամուսինը պօնմառչէի
պէպէք կը կարծէ, (ձգենք որ ատանկ աղ-
ջիկներ չատ քիչ կը գտնուին հիմա հրապա-
րակին վրայ), տասն և հինգէն վեր մինչեւ
քսան տարեկանը ամուսինը մեքինայի տեղ
դնելով՝ անոր ֆիզիքականին միայն կանայ,
քսանէն երեսուն տարեկանը աղջիկները՝ ա-
մուսինը իրենց մատակարարը կը համարեն,
կուգեմնին կրող, ըստ իս՝ պէտք է ամուս-
նանալ օրիորդի մը հետ որ երեսուն գարուն-
ներ վայելած է, զի այդ տարիքը ունեցող-
ները միայն գիտեն յարգը ամուսնութեան, և
թէ մինչեւ այդ տարիքին զգուած ըլլալով
աշխարհային բազմերանգ վայելքներէն, պաշ-
տելու չափ կը սիրեն իրենց ամուսինը: Ու-
րեմն հանգիստ ապրուելու, անդորր կեանք
մը վայելելու համար՝ փնտոցէք 30 մառ-
քան:

— Ծերերը ինչո՞ւ փառում ժամանակին
միտք դեպի գետին ծռած կը փախն:

== Այս հարցումը փոխանակ ինծի ուղ-
ղելով՝ կրնայիք ձեր մեծ հայրիկին հարցնել,
բայց որչափ գիտեմ, ծերերը միշտ հողին նա-
խելով կը քալեն իրենց վերջին ճամբորդու-
թեան յատակագիծը պատրաստելու համար:
Բայց գիտնալու էք որ միայն ծերերը չեն
այդ ձեւով քալողները, կարգ մը իբր թէ
ամօթխած օրիորդներ կան՝ որոնք թէեւ
նոյնպէս գետին նայելով կը քալեն, սակայն
բարիկեան ֆօֆօքէ մը շատ աւելի լաւ գիտեն
մարդ ճալակողտելու սխալէմը, և թէ մէկ
վեր նայելին՝ կեանք մը կը փճացնէ, այն-
քան թոյն կայ այդ կարգի աղջիկներուն
սրտին մէջ, որ աչքէն դուրս կուգայ: Աւելի
լաւ է աչքիդ մէջը նայող օրիորդի մը հետ
յարաբերութիւն հաստատել՝ քան թէ երեւ
պագանի մը հետ:

— Ըսէ՛ տեսնեմ Լիլա, որբեւայրի մը ի՞նչ
առաւելութիւններ ունի կոյս աղջկան մը
վրայ:

== Որբեւայրի կինը, նմանցնել չըլլայ, կը
նմանի այն գրաստին՝ որ լուծը կրելու վարժ
ըլլալով, վարող տիրոջը շատ յոգնութիւն չի
պատճառեր, իսկ օրիորդ մը սանձի բերելը,

ամէն նամպագի գործը չէ: Որքեւայրի կին մը երկրորդ անգամ ամուսնանալուն՝ նախորդ ամուսնոյն փորձառութեամբը ուՅ ըսել չիտար իր նոր էրկանը, անիկայ ընտանեկան կեանքի զպրոցէն չըջանաւարտ կը սեպուի, և կը գիտնայ սիրաշահել ու պարտկել այն ամէն քաղաքները՝ որոնց համար ո՛ր գիտէ առաջինէն որչափ յանդիմանութիւն և ... թերեւս ալ ծեծ կերած էր: Այն մարդը որ, ամուսնութիւնը ընտանեկան հանգիստ կը դաւանի, պէտք է չիչէյի պլուռնընսա որքեւայրի մը ընտրէ իրեն կեանքի ընկեր: (Այս տողերը գրելուս առթիւ ալ կարծեմ թէ պէտք է համարձակիմ բոլոր ծանօթ և անծանօթ կարգուելցու որքեւայրիներուն մէկ մէկ տարեկան Հանգագիտակ զրկել, կանխիկը պայման առաջին):

— Քանի՞ տարեկան երիտասարդ մը կնոջ մը նայած ասեմք համ կառնէ:

— Բայց ներեցէք որ ըսեմ թէ՝ գիրքէ դուրս հարցումներ ուղղել սկսաք: Այս պարագան խառնուածքի խնդիր է: Իմ վրաս խօսելով՝ եօթը տարեկան հասակին մէջ, լաւ կը յիշեմ, տուն այցելող էգ հիւրերէն համ առնելու համար, սէսիւրին վրայ նստողներուն տնկած տոտոխները ձի շինելով վրան կը նըստէի, և աչքերնուն մէջ նայելով կըլլայի, կը զգայի բան մը, որ թէեւ այն ատեն չէի հասկընար, բայց հիմա գիտեմ թէ՝ ինչ կ'ըլլայի: Սէրը ընդհանրապէս կսկսի հրահրիլ երիտասարդի մը սրտին մէջ այն ատեն և այն տարիքին՝ երբ հասուկ օրիորդները կսկսին կարեւորութիւն տալ, առանց faute de mieuxի, և պէտք է ըսել որ՝ եթէ օրիորդները և կիները չըլլան՝ այդ մարդուն մէջ սէրը հայլայիներու պէս ուշ կարթննայ: Կնոջ մը մէկ նայուածքը, օրիորդի մը սիրուն և նշանակալից մէկ ժպիտը կրնան եանկրցն վար պօռալ տալ երիտասարդի մը, որ դեռ մայրիկին հետ կը պառկի:

— Ո՞ր տարիքի մէջ մեռնիլ կուզես Լիլա:

— Հիմաիւ հիմա միտք չունիմ մեռնելու, բայց երբ օր մը (Աստուած ուշէն տայ) միտքս փոխեմ, պիտի փափաքեմ կիներուն խաղալիք չեղած մեռնիլ: Ծերութեան մէջ է՞ն skrs ընելիք վիճակը, կեղծ ակռաներ

դնելը չէ բարեկամս, ո՛չ տոտիկ տոտիկ քալելը, ո՛չ քթախոտ քաշելով՝ անոր ասոր քիթին բերնին բռնքալը, ո՛չ ալ երիտասարդները թող գուարճանան ըսելով՝ երեկոյթէ քաշուիլ և վերմակին տակը մտնալը, այլ աղուոր կիներուն մասխառայ ըլլալը սիրելիս, որոնք իրենց սատկցնող աէքօյթէներով կուգան քոֆու զարնիլ սիւսլան այտերուդ, խանձած պեխերուդ եւայն: Իմ մասին կուզեմ մեռնիլ այն տարիքիս մէջ՝ որ դազաղս անցուցած փողոցներու պատուհաններէն վար կախուող աղուոր կիներ ծեծ կուին կզուրտին ըսելով՝ «չորեւամ ... ան ինտո՞ր ալ քէֆլի էր սանքի ...»:

— Կուզեմ գիտնալ քե՛, երբ երկու երեք աղջիկ իրար գան, ի՞նչ կը խօսին:

— Իմ, քու և անոր վրայ սիրելիս, գիտցիր որ աղջիկ մը մինչեւ զաւակ մը չունենանայ, էրիկմարդն է միտքն ու սիրտը գրաւողը: Ամէն օրիորդ մտացածին մէկը ունի՝ մտքին մէջ, և միշտ անոր վրայ կը խորհի, իսկ երբ երեքը չորսը մէկ գան՝ բոլորն ալ իրենցինը մէջտեղ կը դնեն և կսկսին գովել, երեք ժամուան խօսակցութեան մը մէջ օրիորդներ կարող են՝ նշանուիլ, ամուսնանալ, աղաքներ ծնիլ, կեսուրներու հետ կուռիլ եւայն: Երբեք մտքէ պէտք չէ անցնել թէ՛ կրնայ ըլլալ որ գանուին օրիորդներ որոնք երբ գլուխ գլխի տան՝ հայրիկին սանցիլն և կամ մայրիկին եեկին վրայ խօսին, իրենց լատէալ causeries Արամն է, Մարկոսը, Լէոնը, Միսաքը, Արթինը կամ ուրիշներ:

— Ի՞նչ կարծիք ունիս օրուան գրական հրապարակին վրայ:

— Ովկիանոսին վրայ պզտիկ մուտ մը որ մշուշի բռնուած է, և որուն ղեկն կոտրած ըլլալով՝ խեղճ ճաթորդները օգնութիւն օգնութիւն կը պօռան: Գրականութիւն չունինք, բայց ունենալու հալիս ունինք: Ժամանակ մը մեր ջոջ գրագէտները երբ գործի գլուխ անցած էին՝ նրոք պրոք բան մը ունէինք, բայց հիմա որ անոնք հրապարակէն քաշուեցան, գրական ամուլթիւն մը տիրեց: Գրականութիւն ըսելով՝ պէտք է գոհանաս Աւետարանը չաքաթաթերթին առաջին էջը կարդալով, որ է՛ն խնամուածն է, մէյ մ'ալ Մամուրեան որդիի ձեռմակ ու Սեւը:

— Ի՞նչ է բարեկամութիւնը :

— Բարեկամութիւնը՝ բարեկամա, մեղիկի կաթիլի պէս բան մըն է, և միմիայն ՈՍԿԻ ունեւիրով կրնայ բռնուիլ: Երբ դրամապանակը լեցուն է՝ բարեկամներ քատուիլի վեցերորդ բառին կը պարեն շուրջը, ձեռք ձեռքի round կազմուով, և մեռսի վիզավի ըսելով, կը բաժնուին քենէ՝ երբ պիպիչները ջուրը քաշեն: Ծշմարիտ բարեկամութիւնը Մամուքին պէս անհետացած կը նկատուի այն մարդուն մօտ՝ որ թիւեքը թափած է, ինչպէս կըսեն ժողովրդական լեզուաւ: Ըստ իս աւելի լաւ է կոյտ մը դրամ գէմն առնէ մարդ և անոր հետ փրկիչին յիմարներուն պէս խօսի խնդայ, քան թէ՝ նոյն այդ դրամին սիրոյն մարդիկ ժողովէ գլուխը և վրձացնէ: Բարեկամը, ճշմարիտ բարեկամը ամուրիութեան մէջ մարդու հայրն է, իսկ ամուսնութեան մէջ՝ կինը:

— Ադամ երբ եւան իր դիմը տեսաւ, միտէն ի՞նչ անցուց առաջին անգամ:

— Հիմա տունս տեղս քրքրեցաւ ... , և կամ ասոր մօտ բան մը:

— Հարսնիք եղած տան մը մեջ Է՛ն երջանիկը ո՞վ կրլայ ընդհանրապէս:

— Փիսիկը, շատ ուտելիքներ վայելելուն համար, իսկ անկէ դուրս՝ ամէնքն ալ շատ շատ իրենց կեղծ ուրախութեան մէջ աըրտմութեան պատճառներ կաննան:

— Ամենէն երջանիկ կիներ ո՞վ է:

— Պոխճաճի Բարիսը, քանի որ անոր ասոր չինած ձեռագործները կը ծախէ, և որ տունը որ գտնուի ու արեւը մարը մտնայ՝ հոն կը գիշերէ:

— Վերջապէս քե՛ս տեսնեմք Լիլս, երբ տաբթուան յօդուածդ աւարես ի՞նչ կրնես:

— Կստորագրեմ՝

ԼԻԼՍ

Տե՛ս Փալազաշեան Աղջկանց Բարձրագոյն Կրթարանի ազդը՝ կողքին վրայ:

Ք Ր Ո Ն Ի Կ Ի Կ

Սա վերնագրիս ծայրը աւելցուցած իկ մասնիկս պզտիկցնելու յատկութիւնը ունենալը լուսահոգի վարժապետս սովորեցուցած էր ժամանակին, սակայն շատ անգամ ճիշդ հակառակը կը գործածենք: Օրինակի համար, յիսուննոց Սիմօն աղայի մը՝ Սիմօնիկ աղա կ'ըսենք և մեր հանրածանօթ Միհրան աղային՝ որ իր կազմուածքովը թերեւս աշխարհիս մէջ գտնուող բոլոր Միհրաններուն մէկ ու կէս չափը ունի, փոխանակ մեծցնելու և կամ սառե անունը տալու՝ Միհրանիկ աղա կ'ըսենք:

Կը տեսնէք որ ամէն մարդ հակառակ գործելու կը մղուի, շատ անգամ գիտակցաբար կամ ոչ:

Ասա այսչափ:

Առաւօտուն կանուխ արթնցողը անպատճառ գանձ մը կը գտնէ կ'ըսեն ամէն անոնք՝ որոնք յաջողութիւնը առաւօտուն կանուխ ելլելուն մէջ ըլլալ կը կարծեն:

Ո՛ւր ըլլալը թէեւ լաւ մը չ'եմ յիշեր սակայն տեղ մը կարգացած եմ թէ առաւօտուն կանուխ ելլողները ընդհանրապէս իշապանները, նաւավարները, կառապանները կ'ըլլան և կամ իրենց նամակները ղրկելու համար պախալաֆիին մանչուն սպասող օրիորդները:

Թէեւ այս վերջին դրութիւնը, հետզհետէ վերնալու վրայ է, քանի որ ֆինս չունեը այդ դերը կատարելու մեծ յարմարութիւն մը ունենալնին ժամանակէ մը ի վեր ցոյց տալ սկսած են:

Արդէն շիտակը անանկ է, ի՞նչ տեղը կայ գաղտնիք մը յայտնել այնպիսի մէկու մը որ իր արհեստին շնորհիւ՝ գողութեան համը որչափ անուշ ըլլալը հասկցած է, և որ իբր վաճք իր աշխատութեան կամ նազսէն բան մը վճարելու է և կամ պզտիկ մաս մը այնէ տալու է:

Մինչդեռ խեղճ ֆինսն սուլֆճի է, երկու շաքար տուածիդ պէս՝ օրը քսան անգամ բոսթա կը տանի կը բերէ, և ամենէն աւելին կայ, գաղտնապահ ալ է:

Պօշպօղազութիւնով խօսքիս թելը կըտրեցի ... հա՛, ի՞նչ կ'ըսէի կոր, առտուն:

կանուխ ելլալը սանկ աղէկ է նանկ աղէկ է կ'ըսեն, մինչդեռ սիրելի բարեկամս Մ. Նիքօլաքին, անցեալ առտու փորձի համար կանուխ արթննալով, փոխանակ գանձ մը գըտնելու, կը նայի որ բուն իսկ իր գոնձը այսինքն անկողինի ընկերը թացուցեր է:

Մ. Նիքօլաքին որ հոս ձեզի ծանօթացընելու պատիւը ունիմ, վեց ամիս առաջ կ'ամուսնանայ Օր. Մառիքային հետ, որ ճիշդ պսակի արարողութենէն հինգ վայրկեան յետոյ կ'ըլլայ Տիկին Մառիքա:

Այս ամուսնութեան մէջ եթէ անպատեհութիւն մը կար՝ ոչ տարիքի խնդիրն էր և ոչ ալ աղջիկը քիչ օմիտ բերելը, հապա Մ. Նիքօլաքին հասակը, Մէկ Մէթր ԲՍԱՆ ՍԱՆԹԻՄ էր, մինչդեռ Տիկին Մառիքային միայն սրունքները նոյն բարձրութեան կը հասնէին:

Բան մը՝ որ ամենէն աւելի ամուսնութեան մէջ աչքի կը զարնէ:

Մէկ երկու ամիս սիրով ժամանակ կանցընեն, ամուսնոյն հասակին կարծութիւնը երբէք չի նշմարեր Տիկինը, մինչեւ որ այդ ճիւղալարէն, ինչպէս սովոր են ըսել, կանցնին և որուն կը յաջորդէ փոթորկալից կեանքը (Բասիմին վէպը չի կարծուի հա՛...):

Մեղք, կ'ըսէ Տիկինը, քեզի պէս գաճաճ ամուսին մը ունեցայ, մինչդեռ հազար անգամ կը զոյջայ խեղճ մարդը, բարձրահասակ կնոջ մը երեսէն քաշած տառապանքներուն և անպատեհութեանց համար:

Վերջապէս ամէն օր Մ. Նիքօլաքին Մէկ Մէթր ԲՍԱՆ ՍԱՆԹԻՄ հապակը պատճառ կ'ըլլար որ խռը անպակաս ըլլար այդ յունադասան ամուսին տանը մէջ:

Օր մը Տիկինը առանձին պատուհանին առջեւ նստած ու դէմքը աջ ձեռքին կը թընցուցած փողոյցը կը դիտէ: Նոյն պահուն հոնկէ կանցնի երկայնահասակ շիք երիտասարդ մը, որ ամէն երիտասարդներու պէս տուններուն պատուհանները համբելու սովորութիւնը ունէր:

Տիկինը հասակին վրայ զմայլած՝ բերանը բաց, ա՛խ, ինչո՞ւ մեր Նիքօլաքին հասակն ալ ասոր չափ չ'ըլլար, ըսելով կը նայի, մինչդեռ երիտասարդը որս մը բռնեցինք յոյսով՝ ալ օրը քսան անգամ կանցնի կը դառնայ:

Տիկին Մառիքա կը կռահէ այդ տղուն իրեն հանդէպ ցուցուցած համակրութիւնը, և Եւայի մը թող ըլլալն ալ ապացուցանելու համար՝ կ'որոշէ թողուլ Մ. Նիքօլաքին և փախչիլ անոր հետ:

— Բա՛հ, կ'ըսէ, ի՞նչ կուզեն թող ըսեն, ի՞նչ կարեւորութիւն ունի, ան չ'ըլլայ նէ աս թող ըլլայ, չէրիք է որ հասակը երկայն է, ան պէտք է ինծի համար, և այդ միւսիւն հետ համաձայնելով՝ առտու մը կծիկը կը դնեն:

Անցեալ առտու կամուրջին վրայ բազմութիւն մը խոնուած էր: Հետաքրքրութեանս գոհացում տալու համար՝ ևս ալ ժօռեցայ, ի՞նչ տեսնամ աղէկ, մեր Մ. Նիքօլաքին ապտակի հարուածներ կուտար թէ Տիկինին և թէ անոր հոմանիւն, որ հաշար անգամ զըջացած կ'երեւար, ասանկ սպառ մը խառնած ըլլալուն համար:

— Այս կինը իմա է, կը պոռար անընդհատ, կը փախցնէ կոր սրիկան, և կը քաշքշէր երկուքն ալ դէպի պահականոց:

Կամաց մը կը մօտենամ Մ. Նիքօլաքին ու մեղմ ձայնով մը, բարեկամ կ'ըսեմ, ի՞նչ տեղը կայ ասանկ իրարանցում մը յառաջ բերել ... այս անգամ ներքէ ...:

— Ներեմ ամա գիտե՛ս, ԲԱՆԻՆՃԻՆ է:

ՆԵՐՇԱՊԱՆ:




ԼԻԱԳԱՅԻ ՈՍԿԻ ՇԲԱԴՐԱՄ

ՎՍԵՄ. ԲԷՄԱԼ ՊԷՅԻ

Նորին Կայսերական Վեհափառութիւնը գնահատելով Տպագրական Վերահսկող Վսեմ. Բեմալ պէյի բարւո՛ք ծառայութիւնները, այս անգամ բարեհաճեցաւ շնորհել Նորին Վսեմութեան Լիագաքի Ոսկի շքադրամը:

Խմբագրութիւնս իր ջերմ շնորհալուրութիւնները կը փութայ յայնմ Նորին Վսեմութեան իրեն վիճակած Կայսերական այս բարձր գնահատման առթիւ:



Ուր Ամբակում իր կտակը կը-
նէ եւ կը խնդրէ որ կտակ
չգիտնան, ինչու որ կը ե
մեր սիրելի բարեկամը՝ Պր-
բաւ կայ տակը . . . :

ԱՅՍ Է ԿՏԱԿ . . . ԱՄԲԱԿՈՒՄԱԿԱՆ

Ստորագրեալս Ամբակում, որ մահկանա-
ցու մըն եւս կարելի է որ տատենականէն
անդենականը ոտոււմ մը ընեմ . . . տառնց ոտ-
քերս բանալու . . . այսօր կտակս գրել կուտամ . . .
գրատախտակի մը վրայ, որպէս զի ուզած
տունս գրեմ, տարեմ, ըրած կտակներս . . .
կատակի վերածելով :

Ամբողջ հարստութիւնս կը թողում իմ
ամենասիրելի բարեկամիս, որ աս յօդուածին
տակը . . . ներկայ կը գտնուի . . . մարմնով
բացակայ ըլլալով հանդերձ, եւ պիտի խնդ-
րեմ ալ պիտի բարեկամէս որ իրեն թողած
հարստութիւնս հետեւեալ կերպով բաժնէ,
բաժանումը . . . բարձումի չվերածելով սո-
կայն :

Ի հօրէ եւ ի մօրէ . . . մերկ ծնայ

Մտադրութիւն ունէի մերկ աշխարհիս
չըջանը ընել :

Բայց խանձարուրի անջ փաթկեցին զիս :
Եւ հալկեսը փորս մնաց :

Ուրեմն, ով որ. ի ծնողենէ մերկ պարտ-
աւելով կտաարէ աշխարհիս չըջանը, տասը
հազար ոսկի պարգև. պիտի առնէ, պայմա-
նաւ որ տնուան ալ . . . Պարգև ըլլայ :

Ասկէ երկու հազար տարի ետքը, ըստ
գիտնոց ենթադրութեան, մարդիկ չորս ոտ-
քի վրայ պիտի քայլին . . .

Որովհետեւ մարդոց գլուխները՝ դղումի
չափ պիտի խոշորնայ եղեր . . .

Եւ աս ծանրութիւնը կրկու համար . . .

Մարդիկ իրենց ձեռքերն ալ պիտի ու-
քերու վերածեն . . .

Ուրեմն ո՛վ որ երկու հազար տարի ա-
ռաջ չորս ոտքի վրայ քայլէ մինչեւ կեան-
քին վերջը, պիտի առնէ քսան հազար ոսկի :

Տասը հազար ոսկիով բարձրացնել չէնք
մը, ուր պէտք է ցուցադրուին . . . այն ա-
մուսիները, որոնք խաբուած են իրենց կի-
ներէն : Եէնքին վրայ պէտք է գրել .

« Ե Ղ Չ Ե Ր Ա Ր Ա Ր Ա Ց Ը »

Քսան հազար ոսկի . . .

Անոր որ փորձաքար մը (մեհենկի քարը)
գտնայ, որով մարդու զայնելով համեմատ-
որ՝ կեղծ է թէ ճշմարիտ . . .

Աս փորձաքարը կրնորուն . . . խեղճ պիտի
անիծէ :

Ինչու որ, երբ քիչ մը բարոյականին թեթեւ
է . . . թեթեւ գիծ մը պիտի քաշուի փորձա-
քարին վրայ :

Մարդիկ պիտի գտնուին որ այս քարով
կրնորուն . . . փորձանքի պիտի բերեն . . . փորձե-
լու համար թէ . . . փորձաքարը իրա՞ւ կը
փորձէ :

Կընդմիջենք մեր Ամբակու-
մի եւ կ'ըսենք թէ՛ մեր գր-
եական աւխարհի աւխա-
սաւորներուն բան մը չի՞
սար, այն տեսն Ամբակում
իւ եհյէհեհերը գրական աւ-
խարհին կողմը դարձնելով՝
կսկսի . . . կտակել, բայց
ո՛չ կատակել :

Մեր ամէն խմբագիրներուն, տրանց եւ
կանանց, ծերոց եւ սղայոց, չափու եւ հասա-
կի, բայց որովհետեւ տալիքնիս դրամ է . . .
քիչ մը մտածենք . . . (արդեօք Թաւշանձը-
եանի կտակէն ալ այս պիտի ելլայ) :

ԱՄԲԱԿՈՒՄ

Վերջին արհուին մեր սիրելի բարեկամը
Ամբակում, ուրիշ կտակագիր մը պատրու-
տած ըլլալով, յաջորդ չարթու հրատարակու-
թեան յանձնելու պատիւը պիտի ունենանք :

ԱՆՄԵՌՈՒՄ :

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԻՒՏԱՐ. — Թաղերու միացման և անշատման մասին հարկ եղած բանակցութիւնները որոնք այնքան ծեծուեցան խորհրդարանի կանաչ սեղանին վրայ, արդիւնքը եղող բաժանումը նորէն գոհացուցիչ կերպարանք մը առած չըլլալով՝ նոր կարգադրութեան համար կրկին բանակցութեան պէտքը զգալի է: (Թիւքինին կէզտիւի քիւրքճի տիւքեանը. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. (Եեճի մահալլէ). — Անշատումը դեռ մկները չի մացած ահա անգուսպ մամունան նորէն ի հանդէս կուգայ: Վարժապետները թօշակ կը պահանջեն, այդ ինչ օգուտ ունեցաւ բաժանումը, եթէ ոչ՝ մէկ ձայնի տեղ երկու ձայն: (Իճատիէն ալ հետ առէք և կաղմեցէք ... եռաձայն. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Զմրան գլխարկ կապել տալու համար կարեւոր արուարձանէ մը շաքաթ մը շարունակ հոս եկող տիկին մը չի կրնալով ճաշակէն աւելի քսակին յարմար բան մը գտնել, որոշեց անցեալ տարուան գլխարկը Վոմսանի ներկի գործարանին յանձնել զայն, զամեն գոյնը սեւի ներկել տալու համար: (Դեռ կըսեն թէ կինները զեխ են հէ՞ ... կինները զեխ չեն՝ ալ ամուսինները ... սեխ. Ծ. Խ.):

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Ազգ. վարժարանը ձմեռան եղանակին տաքցնելու համար՝ քալօռիֆէն մը ապսպրուեցաւ, որ պաղ օդը տաք շոգիի պիտի փոխէ եղեր: (Զարմացող և ծաղրող ծնողքներէն կը խնդրուի կանոնաւորապէս վճարել իրենց զաւակաց թոշակները. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Երեսուն տարիներէ ի վեր դեռ ամուսնէն չի կշտացած տիկին մը, ներկայ ձմեռնամուտին՝ գլխաւորը չի մեցնելու համար մէջը եռողան խաբլը կրկնող մը շինեց, և կըսուի թէ՛ խեղճ ծերուկը ծանրութենէն երկու խաթ եղած պուճախը կծկուած է:

ԲԱՆԿԱԼԹԻ. — Գիշերները ժամը երեքէն վերջ տուններու տակէն սլքտալով սիրոյ մուրացկան միւսիւնները ցուրտէն պատսպար-

ուելու համար սօսիքի՛ ս'ամուր ընկերութիւն մը կազմուած է, որ պաշտօն պիտի ունենայ պզտիկ ամսակոմիտիով վերմակներ տրամադրելի ընել այդ պիղ պըլլիս մուրացկաններուն: (Սկիւտար ալ մասնաճիւղ մը բանալին կը խնդրուի):

ՍԱՌԸԵԱՐ. — Հոս մարդ չի մնաց պէտք է ըսել, բացի մէկ քանի յետամնացներէն, որոնք մանկալը միսիւր պույտայճիի պէս վիզերնէն կախած կը պտտին կոր, անշուշտ տուած վարձքերնին հախ ընելու համար:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Ատաբաղարի մեր նախորդ չըլլալիք գործակալը Կարապետ Պուրմանան անուն անքիֆան, կիմանանք թէ մեր արդար դրամները կոկորդը անցնելուն համար քոր չիպան է հաներ: Եթէ իր պարտքը վճարելու ըլլայ մեկիմ մը մեր կողմէն ճրիարար:



ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

ԼՈՒԾՈՒՄ

Մեր նախորդ շաբթուան Մտքի Զբօսանքին լուծումը որ էր՝

ԱՏԱՄ

ՄԱՏԱՄ

Ճիշդ լուծած են տառն եւ ութը ստորագրութիւններ, որոնցմէ Տեար Արշակ Խընամիրեան, վիճակաւ կստանայ խոստացուած երկու հատոր վէպը:

Արտօգրք. ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի քիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

Գ. — ՀԷՐԼՕՔ ՇՕԼՄՍ ԿԸ ԲԱՆԱՅ ԹՇՆԱՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

— Ի՞նչ կը փափաքին առնել պարոնները.
— Ի՞նչ որ կուզէք, պատասխանեց Արսէն Լիւբէն մարդու մը պէս սր անունովի պարագաներով քիչ կըբաղի. ինչ որ կուզէք, բայց ոչ միս, ոչ ալքոլ:

Սպասաւորը արհամարհանքով մեկնեցաւ:

— Ինչպէ՞ս, դեռ բուսակէ՛ր կաղաղակեմ,
— Եւ աւելի, պատասխանեց Լիւբէն:

Նօրտի կայարանի շրջական գտնուող պզտիկ ճաշարանի մը մէջ երկուքնիս կը ճաշէինք, ուր կանչած էր զիս Արսէն Լիւբէն: Իրեն այսպէս հաճելի կը թուի, որ առտին ատին հեռագիրով առաւօտէն որոշելու ժամադրութիւն մը Բարիդի մէկ անկիւնը:

— Կարդացի՛ք այսօր Թանը ըսաւ ինծի:

— Իրաւ որ չէ:

— Հէրլօք Շօլմս պարտաւոր է այս ցերեկէն ետքը Մանչէն անցնիլ:

— Ինչո՞ւ:

— Փոքրիկ ճամբորդութեան մը համար որ Կրօզնի կոմսը ու կոմսուհին իրեն ընել կուտան: Այս պահուս երեքը մէկ կը խորհրդակցին Կանիմարտի հետ:

Երբէք, հակառակ այն բոլորն հետաքրքրութեան որ կ'առթէ ինծի, այո՛, երբէք չեմ արտօնել ինքզինքիս հարցափորձել Արսէն Լիւբէն՝ իր մասնաւոր կեանքին տեսարաններուն վրայ: Այս պահուս դարձեալ, իր անունը դեռ արտասանուած չէր կապոյտ աղամանովի գործին մէջ: Անհամբեր էի ուրեմն. Լիւբէն շարունակեց:

— Թանը Կանիմարտի հետ ունեցած մէկ տեսակցութիւնը կը հրատարակէ, ուրկէ կը հասկցուի որ խարտեաչ կին մը, որ ընկերուհի է եղբեր, պարոն տ'Օթուան սպաննած և գողցած է եղեր Տիկին Կրօզնի համբաւաւոր

մատանին, և կ'ամբաստանէ զիս իբր այդ ոճիւններուն թելադրիչը:

Թեթեւ դող մը զիս ցնցեց: Ճի՛շդ էր այդ, պէ՛տք էր կարծել որ գողութեան բընոյթը այս մարդը մինչեւ ոճիր գործելու մղած է, Ձինքը կը դիտէի: Շատ հանդարտ կ'երևար, աչքերը անկեծօրէն կը նայէին, ձեռքերը կը քննէի, փափկութիւն մը ունէին, անվրաս ձեռքեր ճշդիւ, արուեստագէտի ձեռքեր:

— Կանիմարտ զգայախաբ մըն է, ըսի:

— Բայց չէ՛, բայց չէ, Կանիմարտ նըրբամտութիւն ունի... և շատ անգամ ալ հանձարամբութիւն: Այսպէս, այդ տեսակցութիւնը վարպետի հարուած մըն է: Նախ, կը ծանուցանէ իր մրցակից Անգլիացիին գալուստը ինծի իմացնելու... և անոր աշխատանքը աւելի դժուարացնելու. երկրորդ, կը ճշդէ այն կէտը, ուր որ բերած է գործը, որպէսզի Շօլմս իրեն երեւան բերածներէն օգտուի: Աղուոր պայքար մըն և կը խոստովանիմ...

Հոս կեցաւ յանկարծակի, հազէ մը ցընցուելով, և իր դէմքը անձեռոցին մէջ պահեց:

— Հացի պատա՛ռ մը, քիչ մը ջուր խըմէ կ'ըսեմ:

— Ո՛հ, այդ չէ, ըսաւ խեղդուկ ծախով մը, օդի պէտքը, շուտ վերարկուս և գըլխարկըս, տո՛ւր, տո՛ւր, դուրս նետուիմ...

— Ա՛հ, բայց աս ի՞նչ կը նշանակէ...

— Այս երկու պարոնները որ ահա ներս մը մտնան... կը տեսնաս մեծը... է՛հ լաւ, դուրս ելլալու ատեննիս դուն ձախ կողմէս քալէ որ չկրնայ զիս նշմարել...

— Այն որ ձեր ետե՛ւը կը նստի, ո՞վ է...

— Հէրլօք Շօլմս...

Ինքն իր վրայ բռն ջանք մը բրաւ, երբ թէ կրած յուզումնքէն ամօթ զգացած ըլլար... Անձեռոցը վար դրաւ, գաւաթ մը ջուր խմեց և ժպտելով ըսաւ ինծի.

— Ի՞նչ թանկ է հէ՛, դիւրութեամբ չեմ խռովիր, բայց սա տնաբեկած երեւոյթաւ...

— Ի՞նչ բանէ կը վախնաք սակայն, քանի որ մարդ չկրնար ձեզի ճանչնալ ձեր այլափոխութեանը մէջէն, նոյն իսկ, ամէն ատեն որ ձեզի կը գտնեմ, ինծի անանկ կուգայ որ՝ նոր անձի մը մօտն եմ:

— Ինչի՞ ինծի պիտի ճանչնայ, ըսաւ Արսէն Լիւբէն, Ինչի՞ անգամ մը տեսած է զիս բայց զգացի որ կեանքիս մընչեւ վերջը զիս կը դիտէր, և կը դիտէր ոչ թէ միշտ փոփոխուած երեւոյթո, այլ այն էակը որ եմ: Ահա, կզգամ կոր որ իր աչքերը ծոծրակիս, ուսերուս կը յարէ... և կը փնտռէ, կը վերյուշէ...

Մտածեց: Երթունքներուն երկու անկիւնները չարածծի խնդուք մը նշմարեցի, յետոյ, հնազանդելով կարծեմ իր բնոյթէն քմայքի մը, յանկարծ տեղէն ելաւ՝ դէմքը փոխած, և զուարթօրէն.

— Ի՞նչ դիպումով, իրաւոր մեծ բախլ մըն է... Թող տուէք ինձ ձեզ ներկայացնել բարեկամներէս մին, ըսաւ Արսէն Լիւբէն Հէրլօք Շօլմսի մօտենալով և ինձ ներկայացնելով...

Մէկ երկու վայրկեան Անգլիացի լրտեսը չփոթեցաւ. բնազդաբար գլուխը աճ և ձախ դարցուց, Արսէն Լիւբէնի վրայ նետուելու մտքով: Բայց զինքը ո՞վ արգիլեց. չուզեց ցուցնել թէ իր հակառակորդէն նուազ վարպետ խաղացող մըն է և կամ աւելի, կարողութիւն չունէր ձեռքը անոր վրայ դնելու:

Պաղութեամբ, քովի բարեկամը ցուցնելով յարեց Հէրլօք Շօլմս,

— Պ. Վիլսոն, իմ բարեկամս և աշխատակիցս. — Պարոն Արսէն Լիւբէն:

Վիլսոնի ապշութիւնը զուարթութիւն աբաբճառեց: Աչքերը անձուռնի մը բացած և լայնաբաց բերանը՝ կը խափանէր իր փայլուն մօրթով և պրկուած խնձորանման գուարթ դէմքին զիծերը և որուն շուրջը խաղանակա՜նման մազեր և կարճ մօրուք մը բուսած էր խոտի ծիլի պէս՝ խիտ և ուժեղ:

— Նայի՛նք, Վիլսոն, այդքան ապշութիւն պէտք չէ աշխարհիս ամէնէն բնական բաներուն առջեւ, հեզնեց Հէրլօք Շօլմս մեզմ կատակով մը: Բայց նստեցէք Պ. Լիւբէն, Վիլսքի մը կուզէք, Պօրաօ մը, ո՞չ, և ձեր բարեկամը ձեզի չափ զգոյշ է.

Իր առաջարկը ընդունեցի, և իսկոյն, չորս հոգի միեւնոյն սեղանին վրայ նստած, հանդարտօրէն սկսանք խօսիլ:

Անմիջպէս խօսակցութիւնը բուն կէտին վրայ դարձաւ և երբ Արսէն Լիւբէն անոր կենալու տեսլութեանը վրայ հարցուց, Հէրլօք պատասխանեց.

— Ատիկա ձեզմէ կախում ունի, Պ. Լիւբէն:

— Օ՛հ, տղազակեց Լիւբէն խնդալով, եթէ այդ ինձմէ կախում ունի, պիտի խնդրէի որ այս իրիկուընէ շողհաւ նստէիք...

— Ա՛յո իրիկուն, քիչ մը կանուխ է, բայց կը յուսամ ութը կամ տասը օր վերջ: Շատ գործ ունիմ. Անգլիացիական դրամատան գողութիւնը, Լատի էկէրթօնի առեւանգումը, նայինք պարոն Լիւբէն, կը կարծէք որ այսքան օրը բաւէ:

— Լիւուլի, եթէ կապոյտ ագամանդին գործերովը զբաղիք, մնաց որ ժամանակաւ միջոցը որ պէտք է ինծի զգուշութիւններս ձեռք առնելու համար այն պարագային, երբ այս զոյգ մը գործերուն լուծումը ձեզի ուրոշ յաջողութիւններ տայ:

— Է՛հ, բայց սա է որ, ըսաւ Անգլիացին այդ յաջողութիւնները ձեռք բերելու համար կը հաշուեմ որ ութնէն տասը օրի պէտք ունիմ:

— Եւ տամբմէկերրորդին ձեռքակալել զիս թերեւ:

— Տամներսդը վերջին սահմանն է:

Լիւբէն պահ մը մտածեց և գլուխը թոթուելով.

— Դժուար... դժուար...

— Դժուար այո՛, բայց կարելի... ուրեմն,

— Անգաղանապահութիւն է, ըսաւ Արսէն Լիւբէն, այն տարբեր ձայնով՝ որ մինակ Շօլմսի խօսելու առին կը գործածէր, անգաղանապահութիւն է ձեզի հարցնելը այն ընդհանուր կարծիքին վրայ որ կազմած էք:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՄ

ԼԱՆՑՅՈՐԶԵՐՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համան, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը չահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց չիք եւ դիմացկուն փոքրու-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50-9



ԱՌԻԹԷՆ

ՕԴՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռաչ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն գոյաւարահաններն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒՄ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 դր.	Վեցաստեայ	25 դր.
Գաւառաց համար	» » 54 »	» »	27 »
Արսասանման	» » 12 ֆր.	» »	6 ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՊԱՅՄԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հասսէսի Աստուրեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան եւ
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Իրամները պէտք է շրջուին կամ Օսմ. Մանտաքութով եւ կամ բաթայի փութով 20 հաւաք
20 շրուշի հաշուով:

Ա Պ Ա Ռ Ի Կ

Օ ԱՄԻՄ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊՍՈՒԿ
5000Է ԱՒԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, ող, մատնի, ասեղ, և այլն. նաև անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձև չղթայներ, ասոնցմէ զաստմէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու զլիսարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաև մուշամպա վերարկուններ, բուրդէ և մետաքսէ շրջագգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաև խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաև կարի (ձօնա, Նովման) և այլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշկով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ելն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ շահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանաց տոկունութիւնը, նրբութիւնը և աժառնութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղլ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՊՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

50—48

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ԳԻՇԵՐՈՐԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ
Կ. ՊՈԼԻՍ, ԴԱՏՐ-ԳԻՂ, ՄԷՈՒԼՐՏԱՐ
ՏԱՍՏԷՍԻ:

Շրջ Տարեցրան

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, ստանալին ուսումնիրէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զտա, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Գերմաներէն լեզուները՝ հոնդերձ խօ-

սեղավարժութեամբ (բւաթիք), ինչպէս նաև Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձև, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Ջութակ: Գիշերօթիկները կը վայելին կատարեալ սնունդ և բնատնական անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ:

Բանակցութեան համար դիմել ի վարժարան առ Տնուչն կամ առ Տնայտ հին: Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաև Գշ. Եշ. Շք. օրերը ժամը 5 և 9 ժամը: Դիմելով ի Դրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55:

Աշակերտունեաց վերամուտը տեղի պիտի ունենայ Մեպտ. 3, Բշ. օր:

Հիմնադիր-Տնօրէն

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ